ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ՄԱԱՊՁԲ-20/22»

ք. Վանաձոր «09» մարտի 2020թ.

Վանաձորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷՏԱԺ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վերա Սաքանյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **963910 (ինը հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր տաս)** ՀՀ դրամ:[17]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:[19]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[19] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Վանաձորի համայնքապետարան	**<<ԷՏԱԺ>> ՍՊԸ**
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	**Ք.Վանաձոր Տերյան փ. /Շ/6/29**
Կենտրոնական գանձապետարան	**<<Յունիբանկ>>ՓԲԸ**
ՀՎՀՀ 06901936	**Հ/Հ 24101009048800**
Հ/Հ 900232351024	**ՀՎՀՀ 06946784**
Մ. Ասլանյան	**Վ.Սաքանյան**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 09 » մարտի 2020 թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ՄԱԱՊՁԲ -20/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	39221420	ապակի լվանալու խոզանակ	shifa, shifa, shifa king	բռնակի երկարությունը 2-3 մ	հ ատ	1850	11100	6	Ք. Վանաձոր Տիգրան Մեծի 22	6	Պայմանագրի կնքման պահից 30.12.2020թ.
2	39835000	հատակ լվանալու փայտ	Береза, Береза, Береза	1,5-2 մ երկարության, փայտե կամ պլաստմասե, լաքապատված	հ ատ	1165	13980	12		12	
3	39831281	ապակի լվանալու լաթ	Фрекен Бок, Фрекен Бок Термопласт	Լաթեր 45x80սմ բամբակյա գործվածքից՝ ապակի լվանալու համար	հ ատ	820	137760	168		168	
4	39831283	հատակ լվանալու լաթ	Бонус, Бонус, Термопласт	Լաթեր 45x80սմ բամբակյա գործվածքից՝ հատակը լվանալու համար	հ ատ	435	76560	176		176	
5	39831280	ապակի լվանալու հեղուկ	Clin, Clin,Heakel	Մաքրող միջոց ապակե մակերևույթների համար, փոշեցրիչով, 500մլ :	լ ի տր	1490	62580	42		42	
6	39831273	հատակ լվանալու հեղուկ	Frosch, Frosch, Erdal Rex	Չափածրարված 1լ զանգվածով տարաների մեջ: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ.	լ ի տր	1190	71400	60		60	

				դեկտեմբերի 16-ի N1795-Ն որոշմամբ հաստատված Մակերևույթաակտիվ միջոցների և Մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի:							
7	39831242	լվացքի փոշի	DOSIA, DOSIA, Renit Benkizer	Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ԳՕՍՏ 25644-96: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ	Կգ	800	29520	36,9		36,9	

				ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» համաձայն: 450գր տուփերով:							
8	39224332	դույլ ցինկապատ	Դույլ-Տեղական	Ցինկապատ, 5-10 լ տարողության, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված	հ ատ	1800	25200	14		14	
9	39836000	տնտեսական ավել	Ավել-Տեղական	Մենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ	հ ատ	930	72540	78		78	
10	39831241	օճառ ձեռքի	Doxa, Doxa,Ergun Kimya	Չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Չեզոք» և	կ գ	1650	15840	9,6		9,6	

				քստրա» տեսակների համար 90 գ,, սողայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Չեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) 0 C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկակ ան արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ԳOUS 28546-2002							
11	39831245	հեղուկ օճառ	Магия цветов, Магия цветов, ЭФКО	Մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ	լ ի տր	1000	54000	54		54	

				նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում չլուծվող խառնուկների պարունակությունը ոչ ավել՝ 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպերի պարունակությունը՝ ոչ ավել 0,5%-ից, փրփրագոյացնող հատկությունը՝ ոչ պակաս 300 սմ3-ից, եվրոպական արտադրության, Bulvinws կամ համարժեք, անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի: 500մլ տափերով:							
12	33761100	թուղթ զուգարանի	Обухов, Обухов,Կիևի թղթի, ստվարաթղթի գ.	Գլանափաթեթի լայնությունը՝ 90-110մմ, գլանված թղթի երկարությունը՝ 65մ	հատ	125	78000	624		624	

13	39839100	գոգաթաթիկ/սավոկ/	Zambak, Zambak, ZambakPlast	Գոգաթիակ ռետինե երիզով	հ ատ	690	19320	28		28	
14	39513200	անձեռոցիկ չոր1	Selpak, Selpak, Selpak	Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ² մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի	հ ատ	4.8	19200	4000		4000	
15	39513200	անձեռոցիկ չոր 2	Zara,Zara, ՍԼՍ Մոսինյան	Անձեռոցիկ տարբեր չափերի 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ	հ ատ	2	12000	6000		6000	

				նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի							
16	39812100	հեղուկ մաստիկա/հատակի մածիկ/	EGLE, EGLE, Կենցաղային քիմիայի գործարան	Բոլոր տեսակի հատակների փայլեցման և մակերևույթի փայլեցման համար,չցնդող նյութերի զանգվածային մասը ոչ պակաս 30%-ից,կաթիլանկման ջերմաստիճանը ոչ պակաս 75oC-ից,,փայլեցնող հատկությունը ըստ փայլաչափ սանդղակի ոչ պակաս 12-ից,թաղանթի ջրակայունությունը ոչ պակաս 1 բալից,թաղանթի փոշեկուտակման հատկությունը ոչ ավել 0.8 մգ/սմ2-ին, չափածրարավորված 400գ տուփերով	կգ	1500	27000	18		18	
17	39831276	զուգարանակոնքի մաքրող հեղուկ	Domestos, Domestos, Unilever	Զուգարանակոնքի մաքրող հեղուկպլաստմասե տարայով,քաշը՝1 լիտր :	լ ի տր	970	38800	40		40	
18	19641000	աղբի տոպրակ	Фрекен Бок, Фрекен Бок, КПД	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ՝ սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար: Ծավալը 35լ, տուփում 20 հատ:	հ ատ	25	30000	1200		1200	

19	18421130	ռետինե ձեռնոցներ	Zajel, Zajel, Zajel IRAN	Ձեռնոցներ ռետինից I Տիպի N2, N3 /LX չափի/, հաստությունը02-04մմ, երկարությունը 300 ոչ պակաս, yst GOST 20010-93 :	զույգ	230	37720	164		164	
20	39811300	հոտազերծիչ՝ օդի	Sunny day, Sunny day, Сэльвин	Փակ սենյակի օդի թարմացման համար, վակուումային բալոնիկով,թարմ ծաղկային բուրմունքով: Օդի հոտավետ հոտազերծիչ/աերոզոլ/	հատ	530	19080	36		36	
21	33761100	զուգարանի թուղթ՝ եռաշերտ	Selpak, Selpak, Selpak	եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	215	5160	24		24	

22	39221480	զուգարանի խոզանակ	Zambak, Zambak, ZambakPlast	խոզանակ՝ պլաստմասե իրանի վրա խիստ դասավորված մազերով, նախատեսված զուգարաններ մաքրելու համար:	հ ատ	690	6900	10		10	
23	39812410	կահույքի լաք	Polo, Polo, Козмо Химия	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի տարաներով:	հ ատ	650	19500	30		30	
24	34921440	աղբարկղ	Dunya, Dunya, Dunya Plast	Զամբյուղատիպ, պլաստմասե, 10 դմ³ տարողությամբ:	հ ատ	730	8760	12		12	
25	39831282	սեղանի լաթ	Фрекен Бок, Фламенко, Термопласт	Լաթեր սեղանի մակերես մաքրելու համար նախատեսված նաև լաքապատ մակերեսների համար:	հ ատ	130	30030	231		231	
26	39221420	գորգ մաքրելու խոզանակ	Zambak, Zambak, ZambakPlast	Մազափնջերը մակերեսային լայնության վրա, , կոշտ, օրգանական թելերից, հենքի միջնամասում մետաղյա թելերով հանգուցագործված:	հ ատ	690	2760	4		4	
27	39812600	խցանահան միջոց	Krot, Krot, կենց. քիմ. գործարան	Խցանահան միջոց /նյութ/ մաքրող, խցանները բացելու համար	հ ատ	510	6120	12		12	
28	39221490	սպունգ	Фрекен Бок, Макс, КПД	Սանիտարահիգիենիկ նշանակության, սինթետիկ, խորանարդաձև կամ ուղղանկյուն, (15x20) սմ չափի, հաստությունը՝ 3 սմ կամ այլ չափերի:	հ ատ	115	4600	40		40	
29	39831240	մաքրող փոշի	Rakshha, Rakshha, Paqsan Corp.	Փոշի մաքրող և ախտահանող նախատեսված տարբեր	կ գ	720	15120	21		21	

				մակերեսների համար/ըստ անհրաժեշտության/							
30	39831246	ափսե լվանալու հեղուկ	Ave, Ave Pakshu	Հեղուկ նախատեսված ապսե լվանալու համար, 1000գ տարաներով	կգ	920	2760	3		3	
31	24451141	Ժավել	Белизна, Белизна, Կենցաղային քիմիայի գործարան	Ժավել, 1լ տարողությամբ	լ ի տր	212	10600	50		50	

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232351024

---------- Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<ԷՏԱԺ>> ՍՊԸ
Ք.Վանաձոր Տերյան փ. /Շ/6/29
<<Յունիբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 24101009048800
ՀՎՀՀ 06946784

_____Վ.Սաքանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
« 09 » մարտի 2020 թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ՄԱԱՊՁԲ -20/22 ծածկագրով պայմանագրի

Մատակարարման հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22 , Վանաձորի համայնքապետարան

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2020թ.				Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ		
				Քանակը	Քանակը	քանակը	քանակը	քանակը	գումար
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Ապակի լվանալու խոզանակ	հատ	1850	2	2	1	1	6	11100
2.	Հատակ լվանալու փայտ	հատ	1165	3	3	3	3	12	13980
3.	ապակի լվանալու լաթ	հատ	820	36	36	36	36	144	118080
4.	հատակ լվանալու լաթ	հատ	435	36	36	36	36	144	62640
5.	ապակի լվանալու հեղուկ	լիտր	1490	9	9	9	9	36	53640
6.	հատակ լվանալու հեղուկ	լիտր	1190	15	15	15	15	60	71400
7.	լվացքի փոշի	Կգ	800	8.1	8.1	8.1	8.1	32.4	25920
8.	դույլ ցինկապատ	հատ	1800	3	3	3	3	12	21600
9.	տնտեսական ավել	հատ	930	18	18	18	18	72	66960
10.	օճառ ձեռքի	կգ	1650	2.4	2.4	2.4	2.4	9.6	15840
11.	հեղուկ օճառ	լիտր	1000	12	12	12	12	48	48000

12.	թուղթ զուգարանի	հատ	125	144	144	144	144	576	72000
13.	գոգաթաթիկ/սավոկ/	հատ	690	6	6	6	6	24	16560
14.	անձեռոցիկ չոր1	հատ	4.8	1000	1000	1000	1000	4000	19200
15.	անձեռոցիկ չոր 2	հատ	2	250	250	250	250	1000	2000
16.	հեղուկ մաստիկա/հատակի մածիկ/	կգ	1500	4.8	4.4	4.4	4.4	18	27000
17.	Զուգարանակոնքի մաքրող հեղուկ	լիտր	970	9	7	7	7	30	29100
18.	Աղբի տոպրակ	հատ	25	300	300	300	300	1200	30000
19.	ռետինե ձեռնոցներ	զույգ	230	36	36	36	36	144	33120
20.	հոտազերծիչ՝ օդի	հատ	530	6	6	6	6	24	12720
21.	զուգարանի թուղթ՝ եռաշերտ	հատ	215	6	6	6	6	24	5160
22.	զուգարանի խոզանակ	հատ	690	6				6	4140
23.	կահույքի լաք	հատ	650	6	6	6	6	24	15600
24.	աղբարկղ	հատ	730	3	3	3	3	12	8760
25.	սեղանի լաթ	հատ	130	54	54	54	54	216	28080
26.	գորգ մաքրելու խոզանակ	հատ	690	1	1	1	1	4	2760
27.	խցանահան միջոց	հատ	510	3	3	3	3	12	6120
28.	սպունգ	հատ	115	6	6	6	6	24	2760

29.	մաքրող փոշի	կգ	720	6	4	4	4	18	12960
30.	ափսե լվանալու հեղուկ	լիտր	920	1	1	1		3	2760
31.	Սպիտակեցնող հեղուկ	լիտր	212	10	10	10	10	40	8480
									848440

Մատակարարումը իրականացվում է մատակարարի կողմից:

Մատակարարման հասցե՝ ք. Վանաձոր, Նժդեհի14 , Վանաձորի ՍԱՎՏԲ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2020թ.				Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ		
				Քանակը	Քանակը	քանակը	քանակը	քանակը	գումար
1	2	3	4	5	6	7	8	9	10
3	ապակի լվանալու լաթ	Հատ	820	6	6	6	6	24	19680
4	հատակ լվանալու լաթ	Հատ	435	8	8	8	8	32	13920
5	ապակի լվանալու հեղուկ	լիտր	1490	3	1	1	1	6	8940
7	լվացքի փոշի	Կգ	800	2	1.5	1		4.5	3600
8	դույլ ցինկապատ	հատ	1800	2				2	3600
9	տնտեսական ավել	հատ	930	3	1	1	1	6	5580
11	հեղուկ օճառ	լիտր	1000	3	1	1	1	6	6000
12	թուղթ զուգարանի	հատ	125	12	12	12	12	48	6000
13	գոգաթաթիկ/սավոկ/	հատ	690	1	1	1	1	4	2760

15	անձեռոցիկ չոր 2	հատ	2	2000	1000	1000	1000	5000	10000
17	Զուգարանակոնք ի մաքրող հեղուկ	լիտր	970	4	2	2	2	10	9700
19	ռետինե ձեռնոցներ	զույգ	230	5	5	5	5	20	4600
20	հոտազերծիչ՝ օդի	հատ	530	3	3	3	3	12	6360
22	զուգարանի խոզանակ	հատ	690	4				4	2760
23	կահույքի լաք	հատ	650	3	1	1	1	6	3900
25	սեղանի լաթ	հատ	130	4	4	4	3	15	1950
28	սպունգ	հատ	115	4	4	4	4	16	1840
29	մաքրող փոշի	կգ	720	1	1	1		3	2160
31	Սպիտակեցնող հեղուկ	լիտր	212	4	2	2	2	10	2120
									115470

Մատակարարումը իրականացվում է մատակարարի կողմից:

ԳՆՈՐԴ
Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232351024

---------- Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<ԷՏԱԺ>> ՍՊԸ
Ք.Վանաձոր Տերյան փ. /Շ/6/29
<<Յունիբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 24101009048800
ՀՎՀՀ 06946784

_____ Վ.Սաքանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 09 » մարտ 2020 թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ՄԱԱՊՁԲ -20/22 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39221420	ապակի լվանալու խոզանակ			2775	5550	5550	5550	8325	8325	8325	11100	11100	11100	11100
2	39835000	հատակ լվանալու փայտ			3495	6990	6990	6990	10485	10485	10485	13980	13980	13980	13980
3	39831281	ապակի լվանալու լաթ			34440	68880	68880	68880	103320	103320	103320	137760	137760	137760	137760

4	39831283	Համակի համակում ելմ			19140	38280	38280	38280	57420
5	39831280	Համակի վիճակում հեղինակ			15645	31290	31290	31290	46935
6	39831273	Համակի համակում հեղինակ			17850	35700	35700	35700	53550
7	39831242	Վիշտի փոշի			7380	14760	14760	14760	22140
8	39224332	Տիկնիկներ մեկ			6300	12600	12600	12600	14175
9	39836000	Ինքնաթիռներ ամեն			18135	36270	36270	36270	54405

4	57420	57420	76560	76560	76560	76560	62580	71400	29520
5	46935	46935	62580	62580	62580	62580	62580	71400	29520
6	53550	53550	71400	71400	71400	71400	71400	71400	29520
7	22140	22140	29520	29520	29520	29520	29520	29520	29520
8	14175	14175	18900	18900	18900	18900	18900	25200	25200
9	54405	54405	72540	72540	72540	72540	72540	72540	72540

10	39831241	օճառ ձեռքի			3960	7920	7920	7920	11880	11880	11880	15840	15840	15840	15840
11	39831245	հեղուկ օճառ			13500	27000	27000	27000	40500	40500	40500	54000	54000	54000	54000
12	33761100	թուղթ զուգարանի			19500	39000	39000	39000	58500	58500	58500	78000	78000	78000	78000
13	39839100	գոգաթաթիկ/սավոկ/			4830	9660	9660	9660	14490	14490	14490	19320	19320	19320	19320
14	39513200	անձեռոցիկ չոր1			4800	9600	9600	9600	14400	14400	14400	19200	19200	19200	19200
15	39513200	անձեռոցիկ չոր 2			3000	6000	6000	6000	9000	9000	9000	12000	12000	12000	12000

16	39812100	հեղուկ մասսիկամ/համակի մածիկ/			6750	13500	13500	13500	20250	20250	20250	27000	27000	27000	27000	38800	30000	37720	19080	5160
17	39831276	գուգարաձևակոնքի մաքրող հեղուկ			9700	19400	19400	19400	29100	29100	29100	38800	38800	38800	38800					
18	19641000	աղի տոպակ			7500	15000	15000	15000	22500	22500	22500	30000	30000	30000	30000					
19	18421130	ռետինե ձեռնոցներ			9430	18860	18860	18860	28290	28290	28290	37720	37720	37720	37720					
20	39811300	հոստագերծիչ՝ օդի			4770	9540	9540	9540	14310	14310	14310	19080	19080	19080	19080					
21	33761100	զուգամանի թղթե՝ եռաշերտ			1290	2580	2580	2580	3870	3870	3870	5160	5160	5160	5160					

22	39221480	հումքային վերամշակման			1725	3450	3450	3450	5175	5175	5175	6900	6900	6900	6900	19500	19500	19500	19500	8760	8760	8760	8760
23	39812410	խախտիչի տաք			4875	9750	9750	9750	14625	14625	14625	19500	19500	19500	19500	30030	30030	30030	30030	2760	2760	2760	2760
24	34921440	սպասարկում			2190	4380	4380	4380	6570	6570	6570	8760	8760	8760	8760	22522.5	22522.5	22522.5	22522.5	690	690	690	690
25	39831282	տեղադրման			7507.5	15015	15015	15015	22522.5	22522.5	22522.5	30030	30030	30030	30030	7507.5	7507.5	7507.5	7507.5	1380	1380	1380	1380
26	39221420	նոմոքսոմ գոյացման թափ			690	1380	1380	1380	2070	2070	2070	2760	2760	2760	2760	15015	15015	15015	15015	2070	2070	2070	2070
27	39812600	նյութափոխանակ			1530	3060	3060	3060	4590	4590	4590	6120	6120	6120	6120	22522.5	22522.5	22522.5	22522.5	2760	2760	2760	2760

28	39221490	սպունգ			1150	2300	2300	2300	3450	3450	3450	4600	4600	4600	4600
29	39831240	մաքրող փոշի			3780	7560	7560	7560	11340	11340	11340	15120	15120	15120	15120
30	39831246	ափսե լվանալու հեղուկ			690	1380	1380	1380	2070	2070	2070	2760	2760	2760	2760
31	24451141	Ժավել			2650	5300	5300	5300	7950	7950	7950	10600	10600	10600	10600
Ընդամենը														963910	963910

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232351024

Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<ԷՏԱԺ>> ՍՊԸ
Ք.Վանաձոր Տերյան փ. /Շ/6/29
<<Յունիբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 24101009048800
ՀՎՀՀ 06946784

Վ.Սաքանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն